HY

Մատնահետքեր եվ Eurodac

© iStockphoto / janp013

Տեղեկատվություն երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց համար, ովքեր ձերբակալվել են անօրինական կերպով արտաքին սահման հատելու ժամանակ՝համաձայն թիվ 603/2013 կանոնակարգի (ԵՄ) 29(3)-րդ հոդվածի

Եթե 14 տարեկան եք կամ ավելի և ձերբակալվել եք անօրինական կերպով սահման հատելիս, ապա Ձեզնից մատնահետքեր կվերցվեն և կհանձնվեն մատնահետքերի տվյալների բազային, որ կոչվում է «Eurodac»: Պետք է համագործակցեք մեզ հետ այս գործընթացի ժամանակ, քանի որ օրենքով պարտավոր եք մատնահետքեր հանձնել:

Եթե Ձեր մատնահետքերը հստակ չլինեն, այդ թվում եթե դիտավորյալ վնասած լինեք Ձեր մատները, ապա մատնահետքերը կարող են հետագայում կրկին վերցվել:

Եթե ապագայում որևէ ժամանակ դիմեք ապաստանի համար, Ձեզնից կրկին մատնահետքեր կվերցվեն: Եթե ապաստանի համար դիմեք այլ երկրում, որը տարբեր է այն երկրից, որտեղ առաջին անգամ վերցվել են Ձեր մատնահետքերը, Ձեզ կարող են ուղարկել Ձեր մատնահետքերը առաջին անգամ վերցրած երկիր:

Ձեր մատնահետքերը կպահվեն 18 ամիս. 18 ամիս անց դրանք ինքնաբերաբար կջնջվեն տվյալների բազայից: Eurodac-ում պահպանվում են միայն Ձեր մատնահետքերի և գենդերային տվյալները. Ձեր անունը, լուսանկարը, ծննդյան ամսաթվի և ազգության մասին տվյալները չեն ուղարկվում տվյալների բազային և չեն պահպանվում:

Ապագայում ցանկացած ժամանակ կարող եք Ձեր մատնահետքերը վերցնող երկրից Eurodac-ում գրանցված, Ձեզ առնչվող տվյալների ձեռք բերման խնդրանք ներկայացնել: Կարող եք պահանջել, որ այդ տվյալները ճշգրտվեն կամ ջնջվեն. օրինակ՝ դրանք ջնջվում են այն ժամանակ, եթե դառնում եք ԵՄ-ի կամ ասոցացված պետության քաղաքացի կամ եթե ձեռք եք բերում այդ պետություններից մեկի կեցության թույլտվություն և չեք դիմել ապաստանի համար:

Eurodac-ը կառավարվում է Եվրոպական Միության eu-LISA կոչվող գործակալության կողմից: Ձեր տվյալները կարող են օգտագործվել միայն օրենքով սահմանված նպատակներով: Ձեր տվյալները կստանա միայն Eurodac կենտրոնական համակարգը: Եթե ապագայում ապաստան խնդրեք ԵՄ-ի կամ ասոցացված այլ պետությունում[1], ապա Ձեր մատնահետքերը կուղարկվեն տվյալ երկիր՝ ստուգման համար: Eurodac-ում պահված տվյալները չեն փոխանցվի ԵՄ-ից կամ ասոցացված պետություններից դուրս որևէ այլ պետության կամ կազմակերպության:

1) **Ձեր մատնահետքերը կարող են փոխանցվել, միայն օրենքով թույլատրված կարգով, 27 ԵՄ անդամ պետությունների և 4 ասոցացված պետությունների՝ Նորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն, միջև:**

2015թ. հուլիսի 20-ից, Ձեր մատնահետքերը կարող են հետազոտվել ոստիկանության և Եվրոպական ոստիկանության (Եվրոպոլ) կողմից, որոնք կարող են Eurodac տվյալների բազայից օգտվելու խնդրանք ներկայացնել՝ լուրջ բնույթի հանցագործությունների և ահաբեկչության կանխարգելման, հայտնաբերման և հետաքննման նպատակներով:

© Եվրոպական Միություն 2014
Վերարտադրությունը թույլատրված է: Ցանկացած նպատակով օգտագործման կամ առանձին լուսանկարների վերարտադրության համար՝ պետք է անմիջականորեն վերցնել հեղինակային իրավունքի սեփականատերերի թույլտվությունը:

Կոնտակտային տվյալներ

Eurodac-ի վերահսկողի և նրա ներկայացուցչի ինքնությունը,
Կոնտակտային տվյալներ՝
Ոստիկանական խորհուրդ և
Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն

Վերահսկողի գրասենյակի կոնտակտային տվյալները,
Ազգային ոստիկանական խորհուրդ
Poliisihallitus, PL 1000 (Vuorimiehentie 3),
02151 Espoo
+358 295 480 181
kirjaamo.poliisihallitus@poliisi.fi

Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն
Maahanmuuttovirasto, PL 10,
00086 Maahanmuuttovirasto
Հեռախոսահամար՝ +358 295 430 431
(կոմուտատոր)
migri@migri.fi, www.migri.fi

Եթե ցանկանում եք հասանելիություն ունենալ Eurodac-ում գրանցված ձեր անձնական տվյալներին, կարող եք անձամբ հայց ներկայացնել ոստիկանական բաժանմունք:

Կպահանջվի հաստատել ձեր ինքնությունը: Խորհուրդ ենք տալիս դիմել այն ոստիկանական բաժանմունք, որտեղ ներկայացրել եք ապաստանի վերաբերյալ դիմումը: Ոստիկանական բաժանմունքների կոնտակտային տվյալները կարող եք գտնել ոստիկանության կայքում՝ poliisi.fi:

Ազգային վերահսկողության (Տվյալների պաշտպանության) մարմնի տվյալները:
Տվյալների պաշտպանության
օմբուդսմենի գրասենյակ
Tietosuojavaltuutetun toimisto
Այցելության հասցե՝
Lintulahdenkuja 4, 00530 Helsinki
Փոստային հասցե՝
PL 800, 00531 Helsinki
Կոմուտատոր՝ +358 29 566 6700
Հեռախոսային խորհրդատվություն
մասնավոր անձանց համար՝
+358 29 566 6777
Երեքշաբթի–հինգշաբթի 9.00–11.00
tietosuoja@om.fi, www.tietosuoja.fi

30.1.2024 - armenia